Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Հոկտեմբեր

թիվ 10 (182)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի շարք ՍՊԸ-ների արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, որոշ ՍՊԸ-ների արտարժույթի առուվաճառքի և գրավատան կազմակերպման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին «Կոնվերս Տրանսֆեր» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Տանդեմ Փեյմինթս» ՍՊԸ դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությանը էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն տրամադրելու, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Նոր Նորք» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 2 արտարժույթի փոխանակման կետերի և 1 ՈՒՎԿ ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 211-Ն որոշումը «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ը հաստատելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 221-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 234Ա որոշումը «2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական այբուբենի տառերը» շարքի հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

21 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Ալեքս-Գրիգ» և «ԽՍԱՍ-պրոֆիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 227Ա, 248Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Արծագանք» և «Գոլդեն էիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, ինչպես նաև «Սուրեն-Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 232Ա, 233Ա, 235Ա):
- «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Կոնվերս Տրանսֆեր» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ***ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն է տրամադրվել*** (որոշում թիվ 237Ա):
- ***Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն է տրամադրվել*** «Տանդեմ Փեյմինթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն դրամական (փողային) փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությանը (որոշում թիվ 247Ա):
- ***Գրանցվել է*** «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Նոր Նորք» մասնաճյուղը (որոշում թիվ 1/880Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 530000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/938Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/865Ա, 1/866Ա, 1/925Ա):

*«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների անխափան և որակյալ մատուցումը, նվազեցնել մասնակիցների ռեեստրի վարման գործընթացի ռիսկերը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է համապատասխանեցնել իր գործունեությունը սույն որոշմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
5 սեպտեմբերի 2013 թ., N 211-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 211-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/15
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի (այսուհետ նաև՝ ֆոնդ) մասնակիցների ռեեստրի վարման կարգը և հաշվի օպերատորի գործունեության նկատմամբ պահանջները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. օգոստոսի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 1.10.2013 թ. (ՀՀԳՏ N28 (472)[1], 9.10.2013):

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Մասնակիցը մասնակիցների ռեեստրում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ դիմումները, հարցումները և այլ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին է ներկայացնում՝

1) մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայքի միջոցով,

2) հաշվի օպերատորի միջնորդությամբ, առանց որևէ սպասարկման պայմանագրի կնքման:

3. Մասնակիցների ռեեստրում գործառնություն իրականացնելու համար մասնակիցը կարող է դիմել ցանկացած հաշվի օպերատորի, անկախ այն հանգամանքից, թե որ հաշվի օպերատորի միջնորդությամբ է ներկայացվել նախորդ դիմումը կամ բացվել կենսաթոշակային հաշիվը:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը պետք է սահմանի մասնակիցների ռեեստրի վարման կանոններ, որոնցով սահմանվում են կենսաթոշակային հաշիվների բացման, վարման և փակման, մասնակիցների ռեեստրում գործառնությունների գրանցման, հաշվի օպերատորների կողմից դիմումների, հարցումների և այլ տեղեկությունների ընդունման և մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցման կարգը և պայմանները, հաշվի օպերատորների նկատմամբ պահանջները, հաշվի օպերատորների հետ հաղորդակցման կարգը, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված այլ դրույթներ:

ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***Կանոնակարգ 10/07***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07,

2) ***Կանոնակարգ 10/09***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ը հաստատելու մասին» թիվ 156-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09,

3) ***Կանոնակարգ 5/10***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10,

4) ***դիմում***՝ մասնակիցների ռեեստրում գործառնություն իրականացնելու դիմում կամ մասնակիցների ռեեստրից տեղեկություններ ստանալու հարցում:

6. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԳՐԱՆՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԸ

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԳՐԱՆՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. Մասնակիցների ռեեստրում գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) ֆոնդերի, դրանց կառավարիչների վերաբերյալ,

2) ֆոնդերի մասնակիցների և նրանց պատկանող փայերի վերաբերյալ,

3) ֆոնդերի փայերով իրականացված գործառնությունների վերաբերյալ:

8. Մասնակիցների ռեեստրը վարողը սահմանում է սույն գլխով սահմանված՝ մասնակիցների ռեեստրում գրանցվող տեղեկությունների կազմը, աղբյուրները և գրանցման կարգը:

9. Եթե մասնակիցը մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող որևէ դիմումով ներկայացնում է մասնակիցների ռեեստրում առկա տվյալներից տարբերվող նոր կոնտակտային տվյալներ, ապա մասնակցին տեղեկացումների կամ կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման համար մասնակիցների ռեեստրը վարողն օգտագործում է մասնակցի կողմից ներկայացված վերջին տվյալները:

ԳԼՈՒԽ 5. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

10. Մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված կենսաթոշակային հաշվում կարող են հաշվառվել միայն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերը:

11. Մասնակիցը կարող է ունենալ միայն մեկ կենսաթոշակային հաշիվ:

12. Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ գրանցվում են հետևյալ տեղեկությունները.

1) մասնակցի անունը և ազգանունը,
2) մասնակցի հասցեն,
3) մասնակցի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի սերիան, համարը,
4) կենսաթոշակային հաշվի համարը և հաշվի բացման ամսաթիվը,
5) պարտադիր կենսաթոշակային ֆոնդի անվանումը, որի փայերը հաշվառվում են կենսաթոշակային հաշվում,
6) կենսաթոշակային հաշվում հաշվառվող կենսաթոշակային ֆոնդերի փայերի քանակը,
7) կենսաթոշակային ֆոնդերի փայերի ձեռքբերման և այլ գործառնությունների գրանցման ամսաթվերը,
8) մասնակցի համար (օգտին) կատարված կուտակային վճարները,
9) օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ մասնակիցների ռեեստրը վարողի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄԸ

13. Կենսաթոշակային հաշիվ կարող է բացվել միայն այն անձանց համար, ովքեր «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրավունք ունեն տիրապետելու պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի:

14. Մասնակիցների ռեեստրը վարողը բացում է կենսաթոշակային հաշիվ՝

1) անձի կողմից Կանոնակարգ 10/07-ի համաձայն ներկայացված ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա, կամ
2) հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված պարտադիր կուտակային վճարների մասին անհատական տեղեկատվության հիման վրա:

ԳԼՈՒԽ 7. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

15. Մասնակիցը պարտավոր է տեղեկացնել մասնակիցների ռեեստրը վարողին կենսաթոշակային հաշվի բացման ժամանակ տրամադրված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին: Սույն կետում նշված տեղեկությունները չներկայացնելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը պատասխանատվություն չի կրում մասնակցին պատճառված վնասի համար:

ԳԼՈՒԽ 8. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Ֆոնդի փայերի թողարկման և մարման ընթացակարգի նկատմամբ պահանջները սահմանվում են Կանոնակարգ 10/09-ով:

17. Մասնակիցների ռեեստրում գործառնությունների կատարման համար ներկայացվող դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը սահմանվում են Կանոնակարգ 10/07-ով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 17-ի «Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տարեկան մեկ անգամ անվճար՝ մասնակցի կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին տեղեկատվությունը ներկայացնելու ձևը, բովանդակությունը և կարգը, ինչպես նաև այդ տեղեկատվության ստացման առաջին տարվան հաջորդող տարիներին մասնակիցների կողմից տեղեկատվության ստացման տարբերակների ընտրության, տեղեկատվության ստացման դադարեցման ու տեղեկատվության ստացման վերականգնման կար-

գը, ձևը և բովանդակությունը սահմանելու մասին» թիվ 629-ն որոշմամբ, ինչպես նաև մասնակիցների ռեեստրը վարողի կանոններով:

18. Կենսաթոշակների վճարումը ծրագրային վճարի տեսքով իրականացվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Կուտակային կենսաթոշակը ծրագրային վճարի տեսքով վճարվելու դեպքում դրա հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված կարգով:

19. Կենսաթոշակի վճարումը միանվագ վճարի տեսքով իրականացվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համատեղ սահմանված կարգով:

20. Մինչև մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալը մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների՝ իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու դեպքում միանվագ վճարներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 28-ի թիվ 824-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐ ԵՎ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ ՌԵԵՍՏՐ

ԳԼՈՒԽ 9. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

21. Եթե սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ, հաշվի օպերատորների նկատմամբ կիրառվում են Կանոնակարգ 5/10-ի 5-րդ բաժնի դրույթները՝ «արժեթղթերի հաշվի», «արժեթղթերի հաշվառման համակարգի» և «Կենտրոնական դեպոզիտարիայի» փոխարեն հասկանալով համապատասխանաբար «կենսաթոշակային հաշիվ», «մասնակիցների ռեեստր» և «մասնակիցների ռեեստրը վարող» (ըստ կիրառելիության):

22. Հաշվի օպերատորի կողմից մասնակիցների սպասարկման գործընթացի նկատմամբ պահանջները սահմանված են Հավելված 1-ում:

23. Հաշվի օպերատորը մերժում է դիմումների ընդունումը, եթե դիմումը չի համապատասխանում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին, ինչպես նաև եթե անձնական տվյալները պարունակում են սխալներ և անճշտություններ, կամ դիմումը ներկայացվել է այդ դիմումը ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից:

24. Սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն դիմումի ընդունումը մերժելու դեպքում հաշվի օպերատորն անհապաղ տեղեկացնում է այդ մասին դիմումը ներկայացրած անձին՝ նշելով դիմումը մերժելու հիմքերը:

25. Հաշվի օպերատորը մասնակիցներին սպասարկում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

26. Մասնակիցների ռեեստրը վարողը հաշվի օպերատորի կարգավիճակ շնորհում է միայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված անձանց, որոնք բավարարում են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սահմանված պահանջները:

ԳԼՈՒԽ 11. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԿԱՆՉՈՒՄԸ (ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ԶՐԿՈՒՄԸ)

27. Հաշվի օպերատորի կարգավիճակի հետկանչման (զրկման) մասին մասնակիցների ռեեստրը վարողի որոշումը պետք է առնվազն սահմանի հաշվի օպերատորի կարգավիճակի հետկանչման հիմքերը:

28. Կանոնակարգ 5/10-ի 103-րդ կետը չի կիրառվում հաշվի օպերատորների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 12. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ԶՐԿՎԱԾ ԿԱՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ՀՐԱԺԱՐՎՈՂ ԱՆՁԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Հաշվի օպերատորը, որը ցանկանում է հրաժարվել հաշվի օպերատորի կարգավիճակից, պարտավոր է մասնակիցների ռեեստրը վարողի հետ կնքած պայմանագիրը դադարեցնելուց առնվազն 1 ամիս առաջ այդ մասին տեղեկացում հրապարակել իր պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն կետով

սահմանված տեղեկացումը, բացի հաշվի օպերատորի կարգավիճակից հրաժարվելու մասին, պետք է պարունակի նաև տեղեկատվություն այն մասին, որ մասնակիցները կարող են սպասարկվել բոլոր այլ հաշվի օպերատորների մոտ կամ մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայքի միջոցով, ինչպես նաև այլ հաշվի օպերատորների հետ կապի համար անհրաժեշտ տեղեկություններ և մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայքի հասցեն:

30. Անձը, որը զրկվել կամ հրաժարվում է հաշվի օպերատորի կարգավիճակից, պետք է կատարի մասնակիցների ռեեստրը վարողի բոլոր պահանջները, որոնք ուղղված են մասնակիցների իրավունքների պաշտպանությանն ու մասնակիցների ռեեստրի վարման գործընթացի շարունակականության ապահովմանը:

31. Կանոնակարգ 5/10-ի 106-109-րդ կետերը չեն կիրառվում հաշվի օպերատորների նկատմամբ:

ԲԱԺԻՆ 4. ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 13. ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԵՍՏՐՈՒՄ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

32. Ֆոնդի կառավարիչը մասնակիցների ռեեստրը վարողին է տրամադրում տեղեկություններ՝ օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և մասնակիցների ռեեստրը վարողի հետ կնքած պայմանագրով սահմանված կարգով և բովանդակությամբ: Եթե կառավարչի կողմից տրամադրված տեղեկատվությունն օգտագործվում է մասնակիցների ռեեստրում գործառնությունների իրականացման համար, ապա այդպիսի գործառնությունների կատարման համար հիմք է ընդունվում կառավարչի կողմից վերջին տրամադրված տեղեկատվությունը:

33. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է կառավարիչներին տրամադրել օրենքով, իր կանոններով և (կամ) կառավարչի հետ կնքած պայմանագրի համաձայն սահմանված տեղեկություններն ու հաշվետվությունները օրենքով սահմանված ծավալով և պարբերականությամբ: Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է կառավարչին պարբերաբար տրամադրել տեղեկություններ կառավարչի՝ իր կողմից կառավարվող ֆոնդում մասնակցության չափի վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 14. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐԽԻՎԱՑՈՒՄԸ

34. Հաշվի օպերատորները պարտավոր են պահպանել և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սահմանված պարբերականությամբ և կարգով մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրել մասնակիցների ռեեստրում գործառնությունների և հարցումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, որոնք ենթակա են արխիվացման մասնակիցների ռեեստրը վարողի կողմից:

35. Մասնակիցների ռեեստրը վարողն իր կանոններով սահմանում է սույն կանոնակարգի 34-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգը և պարբերականությունը, ինչպես նաև իր կողմից դրանց արխիվացման կարգը:

36. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է նախապես տեղեկացնել հաշվի օպերատորներին ռեեստրի վարման կանոններում, ընթացակարգերում, ռեեստրի վարման համար կիրառվող տեղեկատվական համակարգերում կատարվող բոլոր փոփոխությունների մասին, որոնք ազդում են հաշվի օպերատորների գործունեության վրա՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ:

37. Սույն կանոնակարգի 36-րդ կետում նշված նախնական տեղեկացման ժամկետը կարող է լինել ավելի կարճ, եթե առկա է որպես հաշվի օպերատոր հանդես եկող անձանց առնվազն երկու երրորդի գրավոր համաձայնությունը:

38. Կանոնակարգ 5/10-ի 95-րդ կետը չի տարածվում հաշվի օպերատորների վրա:

ԲԱԺԻՆ 6. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 15. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

39. Մասնակիցների ռեեստրը վարողը ստուգում է հաշվի օպերատորի գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սահմանված պահանջներին՝

մասնակիցների ռեեստրը վարողի կանոններով, մասնակիցների ռեեստրը վարողի և հաշվի օպերատորի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:

40. Մասնակիցների ռեեստրը վարողը պարբերաբար ստուգում է հաշվի օպերատորների կողմից մասնակիցների կենսաթոշակային հաշիվներում գործառնությունների և հարցումների վերաբերյալ մասնակիցների ռեեստրը վարողի տեղեկատվական համակարգում գրանցված արձանագրությունները՝ համեմատելով դրանք հաշվի օպերատորի մոտ առկա՝ այդ գործառնությունների և հարցումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերի հետ:

41. Սույն կանոնակարգի 39-րդ կետով նախատեսված իրավասությունն իրականացնելիս մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի հաշվի օպերատորից պահանջելու բոլոր այն փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել մասնակիցների ռեեստրում գործառնություններ կատարելու կամ հարցումների համար:

Հավելված 1

«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ի

ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հաշվի օպերատորը հերթերի կարգավորման նպատակով պետք է ունենա հերթերի կառավարման համակարգ, որը կօգնի արդյունավետ կերպով կազմակերպել մասնակիցների սպասարկման գործընթացը:

2. Հաշվի օպերատորը պետք է ապահովի մասնակիցների սպասարկումը սպասարկման բոլոր պատուհանների միջոցով:

3. Հաշվի օպերատորի սպասարկման սրահում (այսուհետ նաև՝ սրահ) պետք է լինի տեղեկատվական տարածք, որը նախատեսված է կենսաթոշակային ֆոնդերի և ֆոնդերի կառավարիչների, ինչպես նաև բողոք-պահանջների վերաբերյալ բրոշյուրների, բուկլետների և այլ տեղեկատվական նյութերի համար: Հաշվի օպերատորը պետք է ապահովի բոլոր տեղեկատվական նյութերի մշտապես հասանելիությունը սրահում:

4. Հաշվի օպերատորի գրասենյակը պետք է ապահովված լինի արդյունավետ և որակյալ՝ սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկայով (համակարգիչներ, տպիչ սարքեր, հեռախոսներ և այլն):

5. Հաշվի օպերատորը պետք է ունենա հեռախոսահամար, որով մասնակիցները կարող են դիմել իրենց կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ստանալու կամ բողոք-պահանջները հայտնելու համար: Հաշվի օպերատորը պետք է ապահովի հեռախոսահամարի մշտապես հասանելիությունը մասնակիցների համար:

6. Հաշվի օպերատորը պետք է ունենա թեժ գծին միացված հեռախոս, որը կապահովի կապ օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի համապատասխան աշխատակցի միջև՝ մասնակցի սպասարկման ընթացքում առաջացած խնդիրները լուծելու նպատակով:

7. Սրահը պետք է կահավորված լինի այնպես, որպեսզի մասնակիցները կարողանան հեշտ և արագ կերպով ստանալ տեղեկատվություն, լրացնել համապատասխան դիմումները:

8. Սրահում տեսանելի վայրում պետք է փակցված լինի մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի ընտրության քայլերի հաջորդականությունը նկարագրող պարզ և մատչելի շարադրված տեղեկատվություն:

9. Սրահում տեսանելի վայրում պետք է առկա լինի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների և կենսաթոշակային ֆոնդերի ցանկը:

10. Սրահում պետք է լինեն Կանոնակարգ 10/07-ով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 17-ի թիվ 629-Ն որոշմամբ հաստատված բոլոր դիմումների ձևերը, որոնք մասնակիցը կարող է ինքնուրույն լրացնել և ներկայացնել օպերատորին:

11. Հաշվի օպերատորը մշտապես պետք է ունենա ընդհանուր պատասխանատու, ով կդիմավորի մասնակցին սպասարկման սրահ մտնելիս և կօգնի կողմնորոշվել սրահում:

12. Հաշվի օպերատորը մշտապես պետք է ունենա սպասարկող առնվազն մեկ աշխատակից: Հերթերի գոյացման դեպքում հաշվի օպերատորը պետք է գործադրի լավագույն ջանքեր, որպեսզի մասնակիցներին սպասարկելու գործընթացում հերթը չգերազանցի հինգ մարդը:

13. Հաշվի օպերատորը պետք է ապահովի, որ մասնակիցներին սպասարկող իր աշխատակիցներն ունենան բավարար գիտելիքներ մասնակիցների ռեեստրի վարման համար օգտագործվող տեղեկատվական համակարգի օգտագործման և մասնակիցներին սպասարկելու համար:

14. Հաշվի օպերատորը պետք է գործադրի լավագույն ջանքեր, որպեսզի մեկ մասնակցի սպասարկման ժամանակահատվածը չգերազանցի 5 րոպեն:

15. Հաշվի օպերատորի աշխատակիցը պարտավոր է մասնակցի հետ հաղորդակցվել մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված ստանդարտ տեքստերին համապատասխան, որոնք համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությանը վտանգող հնարավոր ռիսկերը, հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2006 թվականի հուլիսի 4-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցում (այսուհետ՝ Ուղեցույց) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Ուղեցույցի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում հայաստանյան մասնակցի մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը կարող են վտանգվել այն դեպքերում, երբ՝

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. սեպտեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.10.2013 թ. (ՀՀՊՏ N29 (473), 15.10.2013):

1) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի (այսուհետ՝ Օպերատոր) գործունեությունը կարգավորվում է այն երկրի օրենսդրությամբ, որը ներառված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 292-Ն որոշմամբ հաստատված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրություն չունեցող պետությունների և տարածքների ցանկում».
2) Օպերատորը կամ վերջինիս սեփականատերերից որևէ մեկը ներառված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից սահմանված ահաբեկչության մեջ կասկածվող անձանց ու կազմակերպությունների ցանկերում.
3) Օպերատորը Հայաստանի Հանրապետությունում ծառայություններ է մատուցելու (մատուցում) միայն մեկ հայաստանյան մասնակցի միջոցով, կամ Օպերատորն այլ երկրների համեմատ անհավասար պայմաններ է սահմանում (ստեղծում) համակարգին հայաստանյան մասնակիցների մասնակցության համար, կամ Օպերատորը մասնակցության անհավասար պայմաններ է սահմանում տարբեր հայաստանյան մասնակիցների համար, կամ Օպերատորն իր վարքագծով հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Սույն ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն հայցող (կամ մասնակցող) հայաստանյան մասնակիցը կամ համակարգի Օպերատորը կարող է ներկայացնել համապատասխան հիմնավորում սույն ենթակետով սահմանված հիմքերի առկայության անխուսափելիության կամ անհրաժեշտության վերաբերյալ: Այդ հիմնավորումները Կենտրոնական բանկի կողմից ընդունվելու դեպքում սույն ենթակետով նախատեսված հիմքերը չեն համարվի արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում հայաստանյան մասնակցի մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությանը և (կամ) իրացվելիությանը և (կամ) վճարունակությանը վտանգող հիմքեր.
4) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի Օպերատորի կողմից ընդունված համակարգի գործունեության կանոններում (և/կամ) հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև կնքված պայմանագրում և/կամ ցանկացած այլ փաստաթղթում, որով կարգավորվում են հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև հարաբերությունները՝
   ա. սահմանված է Օպերատորի իրավասությունը՝ զրկելու հայաստանյան մասնակցին արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում անդամակցությունից, և միաժամանակ սահմանված չեն զրկելու պայմանները (պատճառները, հիմքերը) և ընթացակարգերը (այդ թվում՝ տեղեկացման), կամ վերջիններս սահմանված են ոչ հստակ (կարող են ոչ միանշանակորեն մեկնաբանվել), կամ
   բ. հայաստանյան մասնակցին արգելվում է այլ նմանատիպ վճարահաշվարկային համակարգերում մասնակցությունը, կամ
   գ. սահմանված չեն իրացվելիության, վարկային, հաշվարկային կամ տեխնիկական ռիսկերի զսպման, սահմանափակման մեխանիզմներ, որոնց բացակայության կամ անբավարարության հետևանքով հայաստանյան մասնակիցը կարող է կրել ֆինանսական կորուստներ (որոնք կարող են բացասաբար անդրադառնալ հայաստանյան ֆինանսական շուկայի այլ մասնակիցների վրա), կամ կարող է խարխլվել վերջինիս բարի համբավը,
   դ. առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում (այսուհետ՝ Արագ փոխանցումների համակարգ) սահմանված չէ Օպերատորի պարտավորությունն ապահովել իր համակարգի սպասարկումը հայաստանյան մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումներում, այդ թվում՝ սահմանված չէ Օպերատորի պարտավորությունն իր համակարգին միացված հայաստանյան մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումների և (կամ) համակարգը սպասարկող ինքնասպասարկման սարքավորումների (սպասարկման կետերի) գտնվելու վայրերի (առնվազն բնակավայրերի) վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել համակարգի ծրագրային ապահովման համակարգում կամ էլեկտրոնային տեղեկատուներում և ուղղակի ձևով (առանց հղումների) իր ինտերնետային կայքում տեսանելի վայրում, ինչպես նաև ապահովել այդ տեղեկատվության հասանելիությունը համակարգի բոլոր սպասարկման կետերում:
   ե. սահմանված են վճարահաշվարկային համակարգի անդամակցությունից մեկամսյա ժամկետից շուտ զրկելու կամ միակողմանիորեն պայմանագիրը լուծելու հիմքեր (պայմաններ)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.
      ե1) հայաստանյան մասնակցի կողմից իր պարտավորությունների չկատարումը, կամ

ե2) Օպերատորի երկրի իրավասու մարմնի կողմից այնպիսի որոշման ընդունումը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավորեցնում կամ որևէ այլ կերպ պարտադրում է Օպերատորին մեկամսյա ժամկետից շուտ հայաստանյան մասնակցին զրկել անդամակցությունից, կամ

ե3) Հայաստանի Հանրապետության՝ Ֆինանսական գործառնությունների հատուկ հանձնախմբի չհամագործակցող երկրների ցուցակներում ընդգրկված լինելը, կամ

ե4) հայաստանյան մասնակցի սեփականատերերի (մասնակիցների) փոփոխությունը, կամ

ե5) հայաստանյան մասնակցին անվճարունակ ճանաչելը կամ սնանկ ճանաչելու հայցով դատարան դիմելը կամ ֆինանսական գործունեություն իրականացնելու լիցենզիայից (թույլտվությունից) զրկելը.

5) հանրային նշանակություն ունեցող Արագ փոխանցումների համակարգի գործունեության կանոններում (և/կամ) հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև կնքված պայմանագրում և/կամ ցանկացած այլ փաստաթղթում, որով կարգավորվում են հայաստանյան մասնակցի և Օպերատորի միջև հարաբերությունները, սահմանված չէ՝

ա. Արագ փոխանցումների համակարգի Օպերատորի պարտավորությունը հայաստանյան բոլոր մասնակիցների հետ տվյալ համակարգին անդամակցությունը դադարեցնելուց (Հայաստանի Հանրապետությունում գործունեությունը դադարեցնելուց) առնվազն երեք ամիս առաջ տեղեկացնել հայաստանյան բոլոր մասնակիցներին՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա1) Արագ փոխանցումների համակարգի Օպերատորի երկրի իրավասու մարմնի կողմից այնպիսի որոշման ընդունումը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարտավորեցնում կամ որևէ այլ կերպ պարտադրում է համակարգի Օպերատորին եռամսյա ժամկետից շուտ դադարեցնել հայաստանյան բոլոր մասնակիցների հետ տվյալ համակարգին անդամակցությունը (դադարեցնել Հայաստանի Հանրապետությունում գործունեությունը), կամ

ա2) Հայաստանի Հանրապետության՝ Ֆինանսական գործառնությունների հատուկ հանձնախմբի չհամագործակցող երկրների ցուցակներում ընդգրկված լինելը:

բ. Արագ փոխանցումների համակարգի օպերատորի պարտավորությունը տվյալ համակարգում վերջնահաշվարկը կատարել օրական կտրվածքով.

6) Արագ փոխանցումների համակարգի օպերատորը հանրային նշանակության համակարգ դասվելու մասին տեղեկացումը ստանալուց հետո առավելագույնը երկու ամսվա ընթացքում չի ապահովում հայաստանյան առնվազն երկու մասնակցի այդ համակարգին անդամակցելու հնարավորությունը: Սույն ենթակետով նախատեսված տեղեկացումն ուղարկվում է Արագ փոխանցումների համակարգի օպերատորին՝ համաձայն սույն ուղեցույցի հավելվածի:

7) Հայաստանի Հանրապետությունում ստացված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում յուրաքանչյուր առանձին Արագ փոխանցումների համակարգով ստացված դրամական փոխանցումների մասնաբաժինը յուրաքանչյուր ամսվան նախորդող վեց ամիսների միջինացված տվյալների (այսուհետ՝ Կիսամյակային արդյունք) համաձայն գերազանցում է 30 տոկոսը և սույն ուղեցույցով սահմանված Կենտրոնական բանկի կողմից տեղեկացման օրվանից երկու ամսվա ընթացքում Կիսամյակային արդյունքի համաձայն Արագ փոխանցումների համակարգի մասնաբաժինը չի նվազում 30 տոկոսից: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված Արագ փոխանցումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների մասնաբաժինը հաշվարկվում է, և Արագ փոխանցումների համակարգի օպերատորը դրա վերաբերյալ տեղեկացվում է Կենտրոնական բանկի կողմից՝ համաձայն սույն ուղեցույցի հավելվածի.

8) Օպերատորը չի ապահովում սույն ուղեցույցի 4-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված պահանջները:»:

2) Ուղեցույցի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6. Սույն ուղեցույցի իմաստով՝ Արագ փոխանցումների համակարգը հանրային նշանակություն ունի, եթե.

ա. այդ համակարգով իրականացվում են ֆինանսական շուկաներում գործառնությունների հետ կապված հաշվարկները, կամ

բ. այն որոշակի տեսակի վճարումներ կատարելու միակ համակարգն է Հայաստանի Հանրապետությունում, կամ

գ. օրացուցային տարվա չորս եռամսյակներից առնվազն երկուսում տվյալ համակարգով իրականացված դրամական փոխանցումների ծավալը գերազանցել է նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում նման համակարգերով կատարված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալի 10 (տասը) տոկոսը:»:

3) Ուղեցույցը լրացնել 7-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«7. Համակարգը համարվում է սույն ուղեցույցի 6-րդ կետով սահմանված հաորային նշանակություն ունեցող՝ Կենտրոնական բանկի կողմից համակարգի Օպերատորին տեղեկացնելու օրվանից: Սույն կետով նախատեսված տեղեկացումները Կենտրոնական բանկի կողմից ուղարկվում են Օպերատորին՝ Օպերատորի կողմից գրավոր (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) ուղարկված տեղեկացման մեջ նշված հասցեով և եղանակով: Այն դեպքում, երբ Օպերատորը սույն կետով նախատեսված տեղեկացումը չի ուղարկում, ապա Կենտրոնական բանկի սույն գլխով նախատեսված տեղեկացումները ուղարկվում են Օպերատորի ինտերնետային կայքում զետեղված կամ այլ կերպ հայտնի դարձած էլեկտրոնային կամ փոստային հասցեով: Ընդ որում, սույն կետով սահմանված տեղեկացումը համակարգի Օպերատորին ուղարկվում է նաև այն դեպքում, երբ համակարգը դադարում է լինել հաորային նշանակություն ունեցող:»:

4) Ուղեցույցը լրացնել նոր հավելվածով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված Արագ փոխանցումների համակարգով իրականացված Հայաստանի Հանրապետությունում ստացված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալում յուրաքանչյուր առանձին Արագ փոխանցումների համակարգով ստացված դրամական փոխանցումների մասնաբաժնի գերազանցման նկատմամբ սահմանված պահանջի, որն ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

28 սեպտեմբերի 2013 թ., N 221-Ն

Հավելված

Հաստատված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 221-Ն որոշմամբ

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցի

Արագ փոխանցումների համակարգով ստացված փոխանցումների մասնաբաժնի չափի, ինչպես նաև Արագ փոխանցումների համակարգը որպես հանրային նշանակություն ունեցող համակարգ դասվելու վերաբերյալ տեղեկացումը

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը տեղեկացնում է Արագ փոխանցումների համակարգի օպերատորին Հայաստանի Հանրապետության տարածքում Կիսամյակային արդյունքի համաձայն Արագ փոխանցումների համակարգերով ստացված փոխանցումների ընդհանուր ծավալում տվյալ համակարգով ստացված փոխանցումների մասնաբաժնի չափի վերաբերյալ:

2. Կենտրոնական բանկը Արագ փոխանցումների համակարգի օպերատորին տեղեկացնում է նաև տվյալ համակարգը, սույն ուղեցույցի իմաստով, որպես հանրային նշանակություն ունեցող համակարգ դասվելու մասին:

3. Սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկացումն Արագ փոխանցումների համակարգի օպերատորին է ուղարկվում սույն ուղեցույցի 6-րդ կետի «գ» պարբերության հիման վրա, օրացուցային տարվան հաջորդող փետրվարի 15-ին: Ընդ որում, եթե սույն կետով նախատեսված տեղեկացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա Կենտրոնական բանկը տեղեկացնում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4. Սույն հավելվածով նախատեսված տեղեկացումները Կենտրոնական բանկի կողմից ուղարկվում են Արագ փոխանցումների համակարգի օպերատորին՝ վերջինիս հայտնած իր համար նախընտրելի ձևով: Այն դեպքում, երբ Արագ փոխանցումների համակարգի օպերատորի կողմից սույն գլխով նախատեսված տեղեկացման ուղարկման համար նախընտրելի ձև Արագ փոխանցումների համակարգի օպերատորը չի հայտնում, ապա այդ տեղեկացումն ուղարկվում է վերջինիս՝ իր ինտերնետային կայքում զետեղված էլեկտրոնային փոստին կամ այլ հասցեով:»:

2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական այբուբենի տառերը» շարքի հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2013 թվականի նոյեմբերի 20-ից շրջանառության մեջ դնել «Հայկական այբուբենի տառերը» շարքի հուշադրամները:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների էսքիզների հետ մեկտեղ ներկայացված են Հավելվածում (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 հոկտեմբերի 2013 թ., N 234-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 234-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Հայկական այբուբենի տառերը» շարքի (39 տեսակի) ոսկե (լավացված որակի) հուշադրամների

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հայկական այբուբենի տառերին նվիրված հուշադրամներ:

Հուշադրամների դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որից ձախ հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013»: Աջ մասում մետաղի անվան լատինական հապավումն է և հարգը՝ «Au999,9», ներքևում անվանական արժեքը՝ «5000 ԴՐԱՄ»: Շրջագծով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամների դարձերեսի կենտրոնում պատկերված է հայկական այբուբենի մեկ տառ, իսկ շրջագծով՝ հայկական այբուբենի բոլոր տառերը:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Արմեն Քյուրքչյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999,9^0
Քաշը	3,89 գ
Տրամագիծը	20,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը (Ա, Մ, Ս, Ր, Ն, Ի, Վ, Հ, Ե, Լ, Գ, Ո, Է, Ջ, ՈՒ, Կ, Բ, Ռ, Շ, Թ, Տ)	մինչև 5000 հատ
Տպաքանակը (Յ, Պ, Դ, Չ, Փ, Օ, Ք, Խ, Ժ, Ղ, Ֆ, Ց, Ձ, և, Ը, Ճ, Ջ, Ճ)	մինչև 1500 հատ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հոկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.10.2013 թ. (ՀՀԳՏ N31 (475), 15.11.2013):

2. «Հայկական այբուբենի տառերը» շարքի (39 տեսակի) արծաթե (լավացված որակի) հուշադրամների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հայկական այբուբենի տառերին նվիրված հուշադրամներ:

Հուշադրամների դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որից ձախ հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013»: Աջ մասում մետաղի անվան լատինական հապավումն է և հարգը՝ «Ag999», ներքևում անվանական արժեքը՝ «500 ԴՐԱՄ»: Շրջագծով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամների դարձերեսի կենտրոնում պատկերված է հայկական այբուբենի մեկ տառ, իսկ շրջագծով՝ հայկական այբուբենի բոլոր տառերը:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Արմեն Քյուրքչյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	15,55 գ
Տրամագիծը	30,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը (Ա, Մ, Ս, Ր, Ն, Ի, Վ, Հ, Ե, Լ, Գ, Ո, Է, Ձ, ՈՒ, Կ, Բ, Ռ, Շ, Թ, Տ)	մինչև 8000 հատ
Տպաքանակը (Յ, Պ, Դ, Ջ, Փ, Օ, Ք, Խ, Ժ, Ղ, Ֆ, Ց, Ձ, և, Ը, Չ, Ճ)	մինչև 2000 հատ

3. «Հայկական այբուբենի տառերը» շարքի (39 տեսակի) ոսկե (պրուֆ որակի) հուշադրամների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հայկական այբուբենի տառերին նվիրված հուշադրամներ:

Հուշադրամների դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որից ձախ հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013»: Աջ մասում մետաղի անվան լատինական հապավումն է և հարգը՝ «Au999,9», ներքևում անվանական արժեքը՝ «5000 ԴՐԱՄ»: Շրջագծով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամների դարձերեսի կենտրոնում պատկերված է հայկական այբուբենի մեկ տառ, իսկ շրջագծով՝ հայկական այբուբենի բոլոր տառերը:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Արմեն Քյուրքչյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, $999,9^0$
Քաշը	3,89 գ
Տրամագիծը	20,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ընդհատվող ատամնավոր
Տպաքանակը	յուրաքանչյուր տեսակից 200 հատ

4. «Հայկական այբուբենի տառերը» շարքի (39 տեսակի) արծաթե (պրուֆ որակի) հուշադրամների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հայկական այբուբենի տառերին նվիրված հուշադրամներ:

Հուշադրամների դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որից ձախ հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013»: Աջ մասում մետաղի անվան լատինական հապավումն է և հարգը՝ «Ag999», ներքևում անվանական արժեքը՝ «500 ԴՐԱՄ»: Շրջագծով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամների դարձերեսի կենտրոնում պատկերված է հայկական այբուբենի մեկ տառ, իսկ շրջագծով՝ հայկական այբուբենի բոլոր տառերը:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Արմեն Քյուրքչյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	15,55 գ
Տրամագիծը	30,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ընդհատվող ատամնավոր
Տպաքանակը	յուրաքանչյուր տեսակից 200 հատ

«Հայկական այբուբենի տառերը» շարքի հուշադրամների
դիմերեսի և դարձերեսի էսքիզները

Դիմերես


արծաթե հուշադրամ



ոսկե հուշադրամ



Դարձերես՝ արծաթե և ոսկե հուշադրամներ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 25
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 28
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 33
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 34
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 44
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 64
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 77
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 79
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 85
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2013թ. սեպտեմբեր*	*2013թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2013թ. հոկտեմբեր*	*2013թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	100.2		104.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	110464.0	112.7	118994.6	114.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	571.0	99.5	593.7	97.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	196317.4	101.5	125583.4	108.2
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	212384.0	99.1	209536.7	100.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	50974.6	88.1	49351.6	93.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	89049.2	100.4	90043.8	102.1
